

պը, հոյակապ զանգակատան պատուանդը, առաջնորդարանը, եկեղեցին քիւերն անմիջապէս նորոգութեան պէտք ունին: Ներկաներու հետ խորհրդակցութեամբ որոշեց, որ վանքի թեւմական եղող դիւղերու մէջ հանգանակութիւն մը կատարուի, որուն ցուցակն ալ պատրաստուելով յանձնուեցաւ վանահայրական փոխանորդին, որ շուտով գործին ձեռնարկէ: Մշոյ մէջ ալ այդ նպատակով հանդանակութիւն մը պիտի կատարուի:



Ե Ղ Ի Շ Է

(Նարունակութիւն).

Պիտի գիտել տանք նախ որ նախընթաց տան թարգմանութիւնը պարզ խուսափողական է, նոյն բառը (գոյացութիւն) թէ բնազրին և թէ թարգմանութեան մէջ միանդամայն երենալով անայլայլ, որով խօսքը կը մնայ դարձեալ մի և նոյն շփոթութեան մէջ: Երկրորդ՝ որ այս կետաղբութիւնը և մեկնողական գծերը որովք կը ներկայացուին այս համարները այս ամենը, կը ենք, նորաշնար և քմածին են և հնումն գոյութիւն չունենա, ինչպէս յայտնի է բանասիրաց: Նա մանաւանդ յայտնի ապացոյց ալ չունինք որ երկրորդ համարը հակառակորդին ընծայուի, ուր հակառակն ալ միապէս ճիշդ և ողաշտպանելի է:

Ուստի, և մինչեւ որ հարազատ ընթերցուած մը մէջ տեղ երենայ ամեն տարակոյս բառնալու, մենք կը կարծենք եթէ միացնելու է այս երկու համարները և մի այլ իմաստով ըմբռանելու է խօսքը, զօր:

Արդ՝ եթէ զմահ չար աստօւածն արար, զի՞նչ դոյացութիւն երեւի մահու ի միջի. — և ոչ ինչ բայց զբարի Աստուծոյ զարարածոն խանգարեաց :

Ա. ՅՈՒՆՔՆ.

Եթէ մահը չար աստօւծոյ գործն է, ասով ինչ ըրածեղաւ, բայց եթէ բարի Աստուծոյ արարածները խանգարել :

Հետեւեալ ։ Եթէ այդ այդպէս է ։ սկզբնաւորութիւնը մեր այս իմացման չհակառակեր բնաւ, միայն եթէ աղայարար թարգմանուելու չէ :

Գանք այժմ մի քանի Պարսկերէն բառերուն քննութեանը:

VIII.

Ա. ՊԱՐԺԱՆԵՄ

Եւ այսպէս հպարտացաւ բարձրացաւ ի միտս իւր, ի վեր քան զմարդկային բնութիւն ընդգիւալ ասպարթանէր, ոչ միայն յիրս մարմնական պատերազմացն, այլ մեծ ոմն զինքըն կարծէր քան զբնութիւն հայրենի կարգին :

Բոլոր ծանօթ օրինակները կարծեմ այս բառը այսպէս ունին, իսկ Պոլսոյ տիտը, որ Անձեւացեաց օրինակին վրայ եղած է, «ապարասանէր» կը դնէ, «ապարթանէր» ին որոշ միտք մը չգտնելով հայերէնի մէջ :

Սոյն մաօք կը թարգմանէ, ող. Հ. Դուկասեանցն ալ՝ Եւ այնպէս հպարտացաւ գոռողացաւ ինքն իրան, որ սանձարձակ կերպով մարդկային բնութիւնից բարձր էր համարում իրան, և լու :

Չենք գիտեր օտարաղղիք ինչպէս են թարգմաներ, քանչ զի մեր մօտ չունինք, ինչ որ ալ լինի սա մեզ համար աներկ կրայ է, թէ այս բառը սխալ օրինակուած է, և ապերասանի սանձարձակի նշանակութիւն չունի։ Առձեռն բառարանը չանգուզն, մեծորան» նշանակելով շատ լու

թափանցած է բառին իսկ իմաստին, թէ և խօսքին բերմաւնքէն առաջնորդուելով քան բառին ներքին զննութենէն:

Արդ՝ սոյն իմաստը օրինաւորել և հաստատելու ամենէն յստուկ և յարմար եղը կը թուի մեզ ապարքար բառը որ թէ Պահլաւ և թէ հին փարսի գրականութեան մէջ կը գործածուի և կը նշանակի, զեր ի վերոյ, բարձր բան, անհնարին բարձր և այլ այսպիսի գերազանցութեան մոքեր: Եւ կը տարրալուծուի այսպէս: Ապար՝ կամ «ավար» որ կը ճամատուելով կը լինի «պէր» (و) կամ «վէր» (و). և ճշգիւ կը սպասասիանէ մեր «ի վեր», կամ «վէր» ձայներուն: Իսկ թարբ որ արգի չն է ծանօթ գերադրական մասնիկն է, որ փակած է բառին ձայրը: Այս կաշմութենէն մի' օրինակ և եթ ունինք մենք վատքար բառին մէջ, «ռչափ» կը միշենք, ուր Պահլաւ բար ձայնը նայնութեամբ սպահուած է: Նոյն իսկ այն թ գիրը որ կը աեսնինք ապարքար-ին մէջ, կատարելապէս կը մասնէ բառին կազմական զաղանիքը, քանզի ուրիշ աեզ գործածուած ենք աեսներ այս գիրը սոյն մոօք և յօրինուածով բացի, ինչպէս միշեցինք վատքար-ին: Ամէն այլ ուրիք, երբ շի և ձի մէջ լսեր են նախնիք՝ ձայնը, որ կամ Տ գարձուցած են: զօր آخر=ախտար, سردار=սարդար, اسپندارم=սանդարմատ, և նույն որոց ոչ միայն մէջ մուտ ունի թ գիրը:

Երաւ է որ ապարքարեմ բայական մէին չհանդիպեցանք զեռ պարսկերէնի մէջ, թերեւս կար Եղիշէի ժամանակ և ապա խափանեալ, և կամ թէ Եղիշէն լինքը հեղինակարքը հայցուցած լինի բառը բայ մըն ալ անկէ, աշտաղը լով: Հաւանական ենթադրութիւններ են երկուքն ալ:

Յամենայն դէպա, ապարքանելը մի աղաւաղեալ ձեւը կը համարենք մնք ապարքարել-ին որ բուն ուղիղ և նախնական բառն է, և ողեալք է որ ըստ այսմ ու զլուի նոր ապարքը լուսածեանց մէջ:

IX.

Պայմայեմ

Առ ձեռն բառարանին մէջ չպահնք այս բառը, դուցէ իրեւ սխալ ի բաց թողած են, և Եղիշէի օրինակաց ոմանց մէջ ալ, ինչպէս է Պոլսոյ տիոզը (18:1)՝ պայմանեմ կը կարգանք: Այն բառը, որչափ կը յիշենք, մեր մատենադրութեան մէջ ու ըիշ աեզ զործածութ չէ բացի Եղիշէն, և այս եղանակութիւնն է անշուշտ որ նշանակութիւնն պնորոշ թողած է:

Յասաջ բերենք այդ հասուածը:

«Եթէ աշխարհին Հռոմեցի առ յոյժ յիմարութեան, աղիտարար մոլորեալ են և զրկեալ են ի կատարեալ զենէս մերմէ, յանձանց պայմայեն զինասն իւրեանց դուք ևս ընդէր զչետ նոցա մոլորութեանն ցնորիք»: (Հըուարտակ Մէհրներսէհի):

Պ. Հ. Վուկանեանցը, խօսքին բնական բերմանը չետելով, խուսափողարար կը թարգմանէ «իրանը իրանց են վկաս առ իսու:

Մենք կը կարծենք որ պայմայեմ-ը ճիշդ բոսն է, որ Եղիշէ զիտակցարար դործածած է, քանզի սոյն բառը պարսկերէնի մէջ ալ կը զտնինք զնուն անի առոյ սահման ներկաց և գեմքը կը լինի (մայման) ճիշդ մերինին պէս և կը նշանակէ չափել կը նկատի: Եղիշէի ծաղիկալ ոճին անհարազատ և անյարմար չէ, փոխանակ, մեզ պէս տափակարար, անձանց իւրեանց վկաս գործենս ըսելու, աւելի կորովի և նկարուն բացատրութեամբ՝ «յանձանց չափեն զինասն իւրեանց ըսել:

Աւստ' ըստ մեզ պայմայեմ-ն բուն բառը զոր պէտք է պարագան և ոչ թէ, պայմանեմ կամ այլ ինչ քմածին:

X.

Խոնաստան

«Երբէ ե հաս նամակն յարքունիս և ընթերցան ի մեծի խոնաստանի յանդիման տմենայն բաշմութեան կարաւանին»:

Առձեռն բառարանը, այս բառին համար, «Պարսից թագաւորական պատույց անունն էր» կըսէ և, որ աւելի հետաքրքրական է, «օրհնութիւն» իմաստ մըն աղ կը յաւելու:

Բառին գործածուած տեղէն և խօսքին ընթացքէն յայտնի կերևայ որ թագաւորական պալատի նշանակութիւն պիտի ունենայ, սակայն ոչ հին և ոչ նոր մատենազրութեան մեջ պատահած ենք այսպիսի բառի մը: Կրնանք շատ շատ ըսել որ թերեւս խանոսան կամ խանասան կարդալու է Խան արմատէն որ արդարեւ Տուն՝ պալատ (**Ճախ**) նշանակութիւնն ունի: Արքունի սկալատ նշանակելու համար թերեւս ի գործածութեան էր Եղիշէի ժամանակ խանասան բառը որ հիմա սովորաբար ճրխան կըսուի:

XI.

Քրտիկար

«Քանզի տղիտարար մոլորեալ էք ի ծշմարիա օրինացս մերոց, և զատառւածս անարգէք և զիրտի սպանանէք և զջուրս ողջէք, և զմեռեալս ի հող թագելով զիրկիր ապականէք, և Քրտիկար չառնելով ոյժ տայք Հարամանեւոյ»:

Այս «Քրտիկար» բառը բոլորովին անձահ և անիմաստ է այս տեղ, սկալատ է Անձեացեաց օրինակին հետ Քրտիկար ընթեանուլ, և ահա թէ ինչու:

Քրտիկար-ը՝ որ քրուդկար է, միշտ Աստուծոյ համար կը գործածուի, իբր նմա յատուկ ստորոգելեաց մինչ որպէս գրութեալ է մորդկար և մասնաւոր կը լուծին ի քրուդկար (քէրտ, քիրտ=բործ, արարք) և ի յէ (կար), մասնիկ որ բանի մը աւել և ստայիչ և ունեցող լինելու գաղափարը կուտայ: Իմաստից այս լծորդութեան հետեւելով կրնանք հասկընալ որ քրուդկար ստորոգելին Աստուծոյ յարմարցուած լինի իրըև արարիչ հասաիչ գործող, ևլն:

Մեր անսարկեալ համարին մեջ այնպիսի իմաստ մը անշուշտ անտեղի է, այդ համար կը պահանջէ բառ մը որ ոչ թէ: Վուկասեանցին իմացահին սկալատուածոց պաշ-

տան մատուցանել» միայն նշանակի, որ սեղմեալ առում մ'է, այլ ընդհանուր համօրէն Զբագեշտական կանոնները՝ պարագաներանները՝ խարսութիւնները պահել և կրօնական սրբաւորութիւնները ծշղիւ և անմերի կատարել, միայնիւ, ուժուական է կրդար որ ճիշդ ու ճիշդ այս միաբը կուտայ:

Զբագաշտեանց մեջ մի նուիրական եռամասնեայ բանաձև կայ որ թէ Խուրա—Աւեսայի և եթէ բոլոր կրօնական դրոց մեջ ամէն տեղ և ամէն քայլափոխին ընդ առաջ կելլէ, այն է.

منشن و گیشن و گشن

որ արդի լեզուաւ կը թարգմանուի

اندیش و կفتار و կրدار

և կը պատասխանէ մեր

«Խորհուրդ, բան և գործ» կրօնական բանաձևին որոյ անշուշտ հիմ և աղքիւրն է, յորում կրդար ընչափս կը տեսնուի, ամէն տեսակ գործ, արարք, ընթացք, վարք, բարք կը նշանակի, և այս իսկ է անտարակոյս մեր հեղինակին ալ զիտումը: Քանզի յետ թուելոյ այն ամէն յանցանքները զորս քրիստոնէից կը վերագրէին, այն է, կրակը սպաննել, ջուրը պղծել, հողը ապականել, միւս մնացածներն ալ հաւաքարար հասկցնելու համար Յաղկերար կըսէ. «Վերջապէս շէք կրդար այսինքն, մեր օրինաց համեմատ չէք վարուեր, մեր ծէսերը և արարողութիւնները չէք կատարեր=Vous ne pratique pas:

Աւրեմն «քրտար» ը որ Պոլոյ տպին մեջ կը կարդանք բուն ուղիղ բառն է որ պէտք է պահել այս տեղ:

Եղիշէին մեջ մի ուրիշ տեղ ալ գործածուած է այս բառը: Երբ Վասակ և Նախարարը Արքունի Գուռը կանչուեցան և փուրսիշ ամրաստանութեան սկսաւ Սիւնեաց իշխանին համար որ իւր բոլոր պիրծ և շքեղ հանդերձանօք եկած էր անգ. յայնժամ և եկն ել սենեկապանն յարքունուստ, հարցանէր ցնու և տսէր. «Ենքայ յդեաց առ քեզ, յորմէ հարցանէր ցնու և տսէր. «Ենքայ յդեաց առ քեզ, յորմէ գտեալ է քո զայդ ամենայն պատուական պատիւդ, ասա վաղվաղակից վասն որոյ արգար վաստակոց»: Եւ յուշ առներ

նմաս զամենայն բանս պահնին յօրում՝ դատավարական առաջ նաև զոր ոչ ևս անդ խօսեցաւն՝ զայն ևս յայտնէր նմաս Զի ոչ ըստ կոտրգի ունէր նա զտէրութիւնն Սիւնեայ աշխարհին, ոյլ նենդութեամբ և քսութեամբ ևտ սպանանել զհօքեղբայր իւր զՎաղինակ, և յինքն տարաւ զտէրութիւնն իրրեւ քրիկեաւ յարքունիւ»: Պոլսոյ տիտ (1871), էջ 300 — 301: Այսինքն իրրեւ վարձ բազմամեայ ծառայութեան, կամ ինչպէս կըսենք (Էմբասար) = pour services rendus à l'Etat: Կը աեսնենք որ այս տեղ ալ զարձեալ կրծք իւր զոյութեան իրաւունքը կը պահէ և աշղիւ և լիովին կը պատասխանէ սերվիս (վաւտակ) բառին: առանց հարկ լինելու իւր սովորական առումն չենացնելով բոնի և քաշքշողական իմաստներու ենթարկելու: Աւրիշ բան է եթէ ընդունենք որ Եղիշեին ժամանակը թերեւս այս առամբ ալ կը զոր ծածուեր, տոր ալ ատկայն ապացոյց կը պահպի:

XII.

Կեշտ

Այս բառը, սոյն ձեռով և ուղղագրութեամբ Պարսիկ լեզուին մէջ զոյութիւն չունի: Սա թուի լինել խանգարեալը ֆէ՛ք բառին (Կիշ) զոր և Եղիշեի յածախ կը զործածէ և միշտ այս վերջին տառաղարձութեամբ*: Սիսալ է ուրեմն կիւս և ֆէ՛քը իրրեւ երկու տարրեր բառեր ընդունել և պահէլ մի և նոյն նշանակութեամբ: առաջինն իրը յայտնի աղաւազութիւն ի բաց թողի է:

XIII.

Դարիթեր

Սրբոցն Աւհակայ և Յովսեփայ և այլ չորս ընկերաց նաշատակուելէն վերջը, զիականց մասին պատմուած զբոյց-

* Նատ լաւ նշմարած է այս կէտը Պ. Հ. Դուկասեանց որ կըսէ «Եղնիկ Կողբացու «Քէշ Պարսից» բառն երեւ նոյն է, ինչ որ կեշտ Պտղսից»: Ծան. 26, էջ 14:

ներէ և արտաքոյ կարդի տեսիլներէ ան աստիճան շփոթութիւն և արհաւիրը ինկած էր արքունի զօրաց մշջ որ զմին չե խուճապել նոցա ընդ միւեմնաւ դեռ և ա զիրեարս սատակինն; Եւ այսպէս աադնապեալք և ցնորեալք մինչեւ այր զբնկեր ի վահառաստ չդիմուր ընդ որ երթայր; Ի խորհուրդ մաին նախարարքն երեքիան, և սկզան զարժանալով տաել ցմիմեանս:

«Զի՞նչ գործեացուք, զի՞նչ արտացուք վասն անքնին աղանդոյն քրիստոնեից...»: Եթէ լուս լինիմք այսպէս մեզ և անձանց մերոց կասկած ինկ է, և եթէ տանիմք զդուս առաջի թագաւորին, լսերով նորա ի դուսնէ զայդ ամենայն մեծամեծ սքանչելիս, գուցէ և օրինացա մերոց քականման ինչ հասանից!»:

«Ես պատասխանի մնդպեան և տաէ ցնոսաւ. «Ո՞չ զիս ուսիկան արարին ի վերայ ձեր երկոցնւցդ զի՞ այդշափ նեղ զեալ աադնապէք յանձնիս ձեր, զուք զդործ ձեր կատարեցէք, և զհրամանն արքունի ի գլուխ տարայք: ...» Եւ եթէ զարհուրեցայր ընչ յոդիս ձեր, վաղագոյն առաւօտուցն ի դարիքեր եկայի, զի վաղին անդ մովածեան մոված ռաս յաչէ, և նոյն հաճեալ և հումանեցուացէ զմիսս ձեր»:

Պարսիկ մատենադրութեան մեջ որչափ որ խուզարկեցնք, զարիքեր բառ չդանք: Կայ Զրադաշտեանց թերանը անվերտական զարձած մի բառ քայլ, զոր նոքա քայլ կը հնչեն և ասով իրենց առրուշանը (օձմշա) կիմանան: Պիտի ըսկինքն անկասկած թէ մեր բառը սոյն քայլ է, որ իւր Դարիմինը ձեւն այլայլած և աղուադած է, եթէ մի աւելի յարմարագոյն բառ չդունուելը որ թէ նշանակութեամբ և թէ մանաւանդ շենքով աւելի մատդար հայ ձայնին: Սոյն այս բառը կը տեսնենք մենք քայլ-ի մշջ յորում քայլ ծանօթ դունե և եթէ տեսնենք մենք քայլ-ի մշջ յորում քայլ ծանօթ դունե և եթէ հասարակ առմամբ և եթէ «Դուռան (արքայական), Ապարանք Պալատ» նշանակութեամբ: Իսկ քայլ (թէ է-ով և թէ ի-ով) մահմետական դրիչներէ սովորաբար քրիստոնեից աղօթարանին մի յատկացուած է, իպր անարգական՝ արհամարհողական և Զրադաշտած է, իպր անարգական՝ արհամարհողական և Զրադաշտած է, սաւ անշուշտ ի հնումն ալ զործածական էր Զրադաշտած աղօթատեղւոյն համար և աղաւ երբ իւղամ մասնաւանց աղօթատեղւոյն համար:

գիրք երեցան, Գարը ու քրիստոնեայ միապէս շփոթելով իշխեց առելութեան մէջ, նոյն յորջորջումը երկու քին ալ սպառշաճեցուցին: Թէպէտ այժմ Զբաղաշտեանց մէջ դադրած է սորտ գործածութիւնը և փոխարէն, ինչպէս ըսինք (درمه) կըսեն, այլ սակայն անտարակոյս կերեկի որ ձրձն ալ ժամանակին հաւասարապէս գործածական եղած է: Այսպէս կընդունի նաև մեր գիտնական բարեկամ Արտաշիր—Զի որ Պուսպայի Զբաղաշտեանց կողմանէ ընդհանուր Տեսուց և Այցելու է Պարսկաստանի Համազենից և որոյ կարծիքը մէծ կշխունակ անշուշտ այս կարգի համարական խնդրոց մէջ: Ասոր ի նպաստ կը վկայեն նաև համայն առաջին կարիգ աղաւասովիտ ազգային բանաստեղծք:

حافظ-ը կըսէ. «Մողերու դրդիւն Ամ յարմ օճառ օճառ ժողովարանը եկաւ սիրելիս, բաժակ ի ձեռին»: Նոյնը զարձեալ. «Դրա մարդկանի համազենից և որոյ կարծիքը մէծ կշխունակ անշուշտ այս կարգի համարական խնդրոց մէջ չկայ ինձի պէս խելացնոր»: Մի ուրիշ տեղ ալ»

دلیم رضومعه بکرفت و ضرقة سالوس
کجاست دیرغان و شراب ناب کجاست
«Միրոս յափրացաւ մենարանէն ալ զդնաւորի կապոյշէն ալ.
Ուր մոգուց սրբավայրն և ուր զինի անապակ»:

Այս կարգի ասացուածներուն մէջ զինիի յաճախ յիշատակութիւնը մոլորեցնելով հասարակ անպատճագէտ մահմատականները՝ կարծել տուած է նոցա թէ ձի-ը զինետուն նշանակութեամբ առնուած է: Բարզ հաջորդ կըսի Պալրոցին պատիսնող բոլոր առաջնակարգ բանաստեղծները ան աստիճան քաջ զիտէին իրենց նախնի կրօնից և աւանդութեանց վերաբերեալ բաները որ կատարեալ գիտակցութեամբ գործած են աղօթավայր և զինի ի միասին քանզի բոլոր մոգղեղնական տօնից և արարողութեանց մէջ զինին անփրեալ և անբաժան մասը կը կաղմեր պաշտամանց, ինչպէս մենք ալ յաճախ առիթ ունեցանք տեսնելու.

حافظ-ին հետեւեալ առղերն անհերքելի ապացոյց են ասոր
تو و تسليح و مصلى و ره و زهد و ورع

من و ميدخانه و ناقوس و ره دير و كشت
կեղծառոր մալեռանդի մը ուղղելով,

«Դուն ու քո աղօթքդ ու մըմունջդ և սրբակեցութիւնդ ու պահեցողութիւնդ (քեզի)»:

ևս ու գինեատւն ու զանդակ (քրիստոնէից) և մողավայրի ու եկեղեցիի ճանապարհն (ինձի)»:

Աւր ահա մոզավայր (մարտի 10) և եկեղեցի միասին գործածուելով տարակոյս շեն ձգեր թէ ինչ մաօք կըմբռնէր հագուստ մարտի 10:

Նոյն իմաստը ճշգուած կը տեսնենք Հ-կալքարազ հետեւեալ տողերուն մէջ ևս

من و توجون نماند در میانه
چه کعبه چه کنست و دیر خانه

«Երբ որ իս ու զու չմնայ մէջ տեղ.

ի՞նչ (տարբերութիւն ունի) Քաջակա ի՞նչ եկեղեցի և ի՞նչ (ատրուշան)»:

Եւ ուրիշ տեղ մըն ալ, հագուստ գարձեալ, փոխանակ գինիի հետ յիշելու՝ կրակի հետ կը յիշատակէ մարտի 10:

از آن بدیر مغامن عزیز میدارند

که آتشی که نمیرد همیشه در دل ماست

«Անոր համար ինձ շատ յարդ ու պատիւ կուտան մոռց աղօթավայրին մէջ»—

Որովհետեւ (դիտեն եթէ) անշէջ հուրը մեր սրտին մէջն է».

Առանց ուրեմն աւելի երկարաբանելու՝ կեզրակացնենք թէ մարտի 10 ի հնումն, առ Նղիշեաւ, նոյն իսկ կրակատաւնը կը նշանակէր և տարակոյս չունինք եթէ մեր «գարիթեր» ին ալ նախախիպը սոյն այս մարտի 10 է. միայն թէ ձախողաբար եկած քանի պիտի փոխուի: Յայնժամ խօսքին բուն իմաստը կը պարզուի այսպէս:

«Վաղն առաւօտուն ատրուշանը եկէք ուր մեծ մովոեցը սրացան պիտի կատարէ. նա ձեր մտքերը կը հանդարտեցնէ»:

XIV.

Հանդերձապետ

Այս բառը բարչեալ ձեւի մէջ ճիշդ ուղղագրուած է — գերանդերձապետ — իսկ միայնակ հանդերձապետ տպուած, որմէ կը հետեւի թէ հանդերձեղինաց վերակացու ըմբռունուած է: Առձեռն բառարանը՝ անդերձապետ ճիշդ ուղղագրած է, սակայն նշանակութիւնը մութի մէջ ձգած է «մագերու պաշաօն» մը ըսել անցնելով. իսկ Պ. Հ. Դուկասեանցը նոյնութեամբ փոխազրեը է, առանց թարգմանելու կամ ծանոթագրելու:

Արդ՝ «անդարձ»-ը (أندرز) հին լեզուի մէջ «կտակ»*, խորհուրդ, խրատ» կը նշանակիէ յորմէ մարդ է, հետեւյնել եթէ, «անդարձապետ»-ը կամ կտակաց Հոգարտարձուն էր, որպէս թէ ըսելինք ِناظريِوقفِعَلَكَ կամ Աւագ Քարողիչ կամ Աւագ Խորհրդական: Մեր՝ ի Պահլաւ լեզուէ ըրած մի քանի թարգմանութեանց մէջ որ ի մօտոյ լոյս կը տեսնեն, սլիմի դիտուի որ այս երկրորդ մոօք առնուած է միշտ յատուկ այնուն | յորջարջմամբ որ նոյն իսկ մեր անդարձապետն է:

Աւրեմն «անդերձապետ»-ը մի բարձրագոյն պաշտօնեայ էր որ իւր խոհականութեան՝ լրջութեան և սրբութեան բերմամբ թէ խօրհրդական էր Արքայից Արքայի և թէ բեմասաց ի հանդիսաւոր պարագայս:

Իսկ «դերանդերձապետ» ը, որուն համար «դանձապետ» կըսէ Առձեռն բառարանը, վերինին մի առելի պաշտօնականութիւն առած ձեւն է (دراندرزد) որ Արքունի կամ Պատասան Քարողիչ ըսել կը լինի, ինչպէս և առ մեզ էին յայնժամամ Դրան Երեցք և Դրան եղիւկոսունք: Եղիշեի մէջ գործածուած տեղւոյն պատշաճութիւնն ալ կը ցուցէ արդէն որ գանձու և գանձագետի հետ չէ գործը, այլ՝ Արքային մտ մէջ ալդեցութիւն ունեցող ծանրախոչ և բանիբուն

* Կը լսենք որ սոյն առմամբ մինչև հիմա ալ Թիֆլիսեւոց գեղուին մէջ կը գործածուի «անդերձ»:

Խորհրդականի մը, ինչպէս կը տեսնուի հետեւալ համարին մէջ:

Առաջին բաղխման անյաջող ելքէն յուսահատ՝ մոդպետը վասակին կըսէ.

«Արդ եթէ այդ այգովէս է, և քեզ կամք չէ ունել զմագութիւն, մի՛ ինչ պատկառեր զու երկիւղիւ յարբայէ. եւ զրեմ և ցուցանեմ ի զուռն մովզետան մօվզետի և զերանզարձապետի և մեծ հաղարապետին:»:

Այս խմբին մէջ զանձապետը յայտնի է որ, մուտչկրնար ունենալ:

XX.

Յոզպայիտ

Այս բառը Եղիշէն կը զործածէ իրեւ մին ի մասանց մոդական ուսման: Ահա իւր տողերը.

«Նաև զոր մեծ պարծանս համարէին ըստ իւրեանց մոլութեանն կարգին, Համակղեն անուն էր. զիա՛ր և զԱ՛պարտքան, ուսեւալ էր և զԲոզպայիտն, ունէր և զՊաշլաւին և զՊարսկադենն: Քանզի այս հինգ կեշոք են որ զբաւեալ ունին զամենայն օրէնս մոդութեանն ...»: Բ. տու, Կ. Պոլ. 1871, էջ 314—15:

Բոլոր այս համարը խորին և մանրակրկիտ հետազօտութեան կարօս է, թէ բառերը և թէ իմաստները ճշգելու համար թէ ինչ են ստուգին Ամպարտքաշը. Պալհատիկը, Պարսկադենը, ևն:: «Յոզպայիտ»-ի վրայ դարձնելով առաջմ մեր ուշալրութիւնը, կըսենք որ ճիշտ այս զբանութեամբ և հնչմամբ բառ չկայ բոլոր Աւեստական զբականութեան մէջ: Երեխ սա աղաւաղեալ է «Ոչբայիս» էն որ մին է Կանոններէն երեք Աւագ Օրհնութեանց, այն է. Տայաշ, Տայաշ և Տայաշ, որոց իւրաքանչիւրն իրեն յատուկ կարդն և տեղն ունի: «Ոչբայիս» էն ոքչայիմ բայ ալ կայ փառարանիմ/ մոքով *:

* Տե՛ս մեր «Գործք Արտաշը Բարեկանի» Պահ. թարգմանութիւնը:

Թէպէտ և ինչպէս ըստիք կանխահամաս է այս հինգ կեշաի զանազանութեանը վրայ այժմէն որոշ զալափար մը յայտնել, սակայն խօսքին ընթացքէն և գործոյն հանդամանքէն այնպէս կը գուշակուի որ կրօնական ծիսից՝ կարգաց և կանոնաց կակնարկուի, որոց մին էր նաև «Ոչբայիս»-ը:

Կատարեալ աներկմտութեամբ կարող ենք ուրեմն ուղղել մեր այս անծանօթ և անգոյ «Բողպայիտա»-ը և ի տեղի փոխանակել ուղիղ՝ յայտնի և որոշ իմաստ յայտնող «Ոչբայիս» ընթերցուածը *:

Բ.

Եզնիկ **

XVI.

«Եւ զաձելն և նուազել լուսնի ընդ պատենիւք իմն մտանել և ելանել ասեն իմաստունք: Եւ նշանս անտի տան, զի է երբէք՝ յորժամ յաձմունսն իցէ և լնլոյն, շուրջ զանօթովին ծանրանայ, որպէս թէ ընդ սակաւ ինչ փեռեկումն ծերպից նշոյլք երեխոցին», Էջ 216:

«Ծանրանայ» բառը Տ. Յ. Հիւնքեարպէյէնաին «Ծրանայ» կուղեր կարդալ: Եւ արդարեւ ալ այս տեղ շատ յարմար բառ մը չթուեր ծանրանայ. մինչդեռ լուսոյ ցոլման զալափարին հետ շատ աւելի պատշաճ և նպատակայարմար կուղայ ծրանայ, եթէ պատշաճադոյն բառ մը չդանուի ձեռադրաց մէջ:

Յիշեալ հմուտ քահանայն մի կարեռ տեղափոխութիւն ալ մատնանիշ կընէր այս տեղ որ կարծեմ հետեւելն է զորժամանակին մենք Պոլոյ ազգ. թերթերէն միոյն մէջ նշանակած ալ ենք:

Կարդա՛ 217 երեսի 2-րդ պարբերութենէն անդին ուր

* ՏԵ՛՛ նաև անդ՝ ի ժան:

** Մեր մօտը գտնուածը Վենետիկի տիտ է (ՈՄՀԵ) որմէ պիտի ընենք մեր կոչումները:

*** Յայտնի է որ Եղնեկին գրչէն ելած չէ այս յոքնակի բայը:

կախարդաց՝ հնապիտութեամբ՝ լուսինը երկիր իջեցնելու վրայ է խօսքը»:

«Եւ չե հնար լուսնի յերկիր իջանել, որպես կախարդաց տեսեալ ի ժամանակի... բարբանջեն թէ զլուսին իշջուցանիցեն, որում չեն *** մարթ լինել, թէ որքան զբառ զումաշխարհս մեծ է՝ թէ ի կալ մի փոքրիկ ամփոփիցի....»

.... Այլ զի ոչ երբեք իջանէ՝ յայտ անտի է, զի ոչ շիշանելն ոք տեսանէ զնորաւ և ոչ զամբառալին: [Եւ եթէ կացեալ միտ գնիցես, անդէն անդէն մթացեալ անօթն լուսաւորի առ սակաւ սակաւ մինչև ամենեին յարդարի]: Զիթէ իջանելոյ ինչ հնար գոյր, թէպէտ և զիջանելն ոք ոչ ահսանէր: սակայն չհամրառնալն ամենեքեան տեսանեին»:

Յայտնի կը աեսնուի որ այգ փակ առնուած խօսքը նոյն սպարբերութեան նախընթաց և հետեւորդ առներուն հետքնաւ ո՛ւ և է առնչութիւն մը չունի: այլ՝ օտար, առ կախմացած մի խօսք է անոնց մէջ տեղը: Բարձ ուրեմն այս տունը այն տեղէն և ահա իմաստները սքանչելապէս կը զուգուին կը պապուին միմեանց հետ: Խոկ այն անջատեալ մասը բնիք զետեղէ վերի 216 երեսի համարին վերջը ան ալ այն աեղ խոր պատշաճաւոր զիրը և իմաստը կստանայ և հեղինակին դիտումը կը պարզուի այսպէս:

«Եւ զանելն և նուազել լուսնի՝ իրրե ընդ պատենիւք իմն մտանել և ելանել ասեն իմաստունք: Եւ նշանս նշանս անտի տան, զի է երբեք յորժամ յաձմունն իցէ և լնլոյն շուրջ զանօրովն ծանրանայ, որպէս թէ ընդ սակաւ ինչ փեռիկումն ծերպից՝ նշոլք երկեսցին: Եւ եթէ կացեալ միտ գնիցես, անդէն անդէն մթացեալ անօրն լուսաւորի առ սակաւ, մինչև ամենեին յարդարի»:

Եւ միւս կողմէն, կարդանք երկրորդ նշանակուած պարբերութիւնն ալ առանց այս օտար միջանկեալի»:

«Այլ զի ոչ երբեք իջանէ՝ յայտ անտի է, զի ոչ զիջանելն ոք տեսանէ զնորաւ, և ոչ զամբառալին: Զիթէ իջանելոյ ինչ հնար գոյր, և լուսաւորի առ սակաւ, մինչև ամենեին յարդարի»:

Ահա երկու կողմանէ ալ իմաստները լի՝ յօդակապ և քաջայարմար:

XVII.

Գ. Գրոց մէջ Եվկիկը ձայն փիլիսոփայից հետի պայքար կը մանեւ և երկու տեղ կը բաղխի Պղատօնին. մի՛ (էջ 224) այն կարծիքին համար թէ աստուած և հիւզ և իդոս կը զնէր նա էութեամբ, այսինքն թէ կերպարանաց և ոչ բնութեանց արարիչ կը համարէր զԱստուած. միւսն՝ (241) այն կէտին համար թէ Պղատօնն, իւր բոլոր խմաստութեամբ, չէր կրցած ըմբռնել և ճանաչել զԱստուած ինչպէս պարտ և պատշաճն էր: Մարաք գեռ չսկսած ընդհանուր ակնարկով մը կը պատարաստէ Եղնիկ իւր ընթերցողները՝ ըսելով. «Եւ այլք բազումք ի փիլիսոփայից առասպելական բանիւք բանդագուշեալք, խոստանան զԱստուծոյ արամանւթիւնս կատարել: Որք զԱստուածն ոչ ճանաչեն, և ոչ զարարիչն յարարածոց մեկնել զիտեն, զի՞արդ զԱստուծոյ ճառել մասքերիցին: Եւ մասնաւանդ որ քան զամենեսինն իմաստնադոյն համալին զՊղատանան որ վասն Աստուծոյ և վասն ոգւոց և վասն արարածոց խօսել յօժարեցաւ»:

Այս նախապատրաստականեն յետոյ իրբեւ քաջամորտիկ ախոյեան, անվեհեր ասպարելդ կիջնայ Հայ հանճարը և ձայն կուտայ իւր սոսխին:

«Եւ արդ», կըսէ, «ընդ նմա իսկ մարտիցուք զոռութեան բանիւք, որ քան զամենայն փիլիսոփայն աստուածապաշտագոյն երեխ Յունաց: Զի նորա առաւել զտանի զծանուցեալ զԱստուած, և ոչ զարարչութիւնն արարածոց: Զի յորժամ զնորա մեծարոյ կարծիսն գձձեցուք, և հանցուք զնա յաշաց իւրոցն խարեցելոց, ապացուցցուք թէ ով Աստուած է, և զի՞նչ նորա արարածք»:

Այս դռու և խիզախ խոստումէն եաբըս զոհացուցիչ երկարութեամբ և կանոնաւոր ճառ մը կապատեի: Արդ սորտ տեղ ի՞նչ կը տեսնենք. հազիւ մի քանի տող սկզբնաւորութիւն մը, և կը փակուի զիբըը:

«Եւ մի ինչ, զոր առաւել անճառ համարի Պղատօնն, այս է թէ միշտ էր Աստուած, և արարածս ինչ ոչ ունէր. զորոյ զկաման սիրեմ վասն զԱստուածն իննզընելոյ, և զամբարտա-

ւանութիւնն ոչ զովեմ»։ Այս է աչա խոստացեալ լիճարանական ճառը, եթէ առող Պատառնը կը տապալի:

Աւքեմն աեղի կայ կործելու թէ ամբողջ այս ճառը մէջ տեղին անյայտացած է։ Ի՞նչ մեծ և անկնոչանելի զանձ մը պիտի լինի Հայ լեզուի և ժամանագրութեան համար, եթէ այդ կտորը յանկարծ մի կանխուլ անկեան մէջ մոռցուած փոշոսած ձեւաղբի մը մէջին դուրս դար։

9.

Ազաքանգեղոս

XVIII.

Աշակատ

Այս բառը մեր մատենագրութեան մէջ միշտ այս ձևով կը տեսնուի թէ Աղաթանգեղոսի մէջ, թէ Խորենացւոյ և թէ ըստ Նոյանէ այլոց։ Ատելին մեզ սխալ կը թուի այս ընտերցուածը որ պետք է լինի «Յաշակատ»։

Քանդի աւ կամ աւսի արմատով բառ մը չենք տեսներ չին պարսկերէնի մէջ որ իմաստով Աօսիւաշին՝ յարմար զայ կայ իրաւ հետ բառ մը որ մեր հաւաքին կը պատասխանէ և այս խնդրէն դուրս է։ Մի միայն մեր յաօս բառն է որ կնծիուը կը լուծէ և տեղին դժուարութիւն կը բառնայ վաւերականութեան ամէն հաւասարը կրելով իւր վրայ։

«Յաշակար» թէ և մերայնոյ մէջ իրը զոհ առնուած է, միշտ և թերես այնպէս ալ եր իրենց ժամանակինց բայց չիմաս, ինչպէս Զրադաշտեանիներէ ստուգեցինք այսպիսի սովորութիւն մը չկայ։ այլ սորդագէն նուիրաբերութիւնն զօր հաց՝ կաթ զինի՝ պառուզ և անուշահոս խէմեր որոնցմավ ճարու (յարդարելով՝ քահանայն (دستور), Աւետարապէն տղօթքներ կը մրմնջէ, զինդ լեզուաւ, և կը սրբագործէ և ապա կը բաշխէ ժողովրդեան ի վայելս ինչպէս քանիցս ներկայ գանուեցանք։

Մասնաւոր յաօս-եր կան մասնաւոր և այլ և այլ նորա-

տակներու և յիշատակներու համար առեօթ ամսասպանդ (հրեշտակապեաք) իրենց յատուկ յազուհաւը-ն (ին ո իշտ) ունին, դոր. Որմիղգ*—յաշտ (հրմզդ իշտ), Արուշ—յաշտ (Վահրամ իշտ), և լին: Արեգակը իւր յատուկ պաշտօնն ունի (Արե—յաշտ): Երանու հին դիւցապունք իրենց յատուկ յաշտերն ունին (Աբան իշտ) (Դին իշտ)՝ և այսպէս շատեր:

Եթէ արեամբ և եթէ անարիւն, յաջու մի կրօնական արարողութիւն կամ պաշտօն է ուրեմն որ յիշատակի վասն կը կատարուի մասնաւոր դիպաց և պարագայից մէջ և ձիշդ այս իմացուածով ալ գործածուած է Ազաթանգեղոսի մէջ ուր խօսքին ձեր այնպէս մը եկած է որ գրեթէ ստուգաբանուած է բառը: Դիւրութեան համար դնենք այդ ամբողջ պարբերութիւնը.

«Եւ իրրե եկն եհաս ի սահմանս Հայոց, լուաւ Գրիգորիոս՝ թէ Վահէվահեան մեհեանն մնացեալ է յերկրին Տարօնոյ, մեհեանն մեծադանձ, լի ոսկով և արծաթով, և բազում նուերք մեծամեծ թագաւորաց ձօնեալ անդ, ութերորդ պաշտօն հոչակեալ, անուանեալն վիշապաքազն Վահագնի. յաւսից տեղիի թագաւորացն Հայոց մեծաց, ի մնարս լերինն Քարքեաց ի վերայ գետոյն Եփրատայ, որ հանդէալ հայի ի մեծ լեառնն Տօրոսի, որ և անուանեալ ըստ յաճախապաշտաման տեղեացն յԱշտիշատ. դի յայնժամ ևս դեռ շեն կային երեք բազինքն ի նմառ:

Եթէ ուշազիր կարդանք այս համարը, կտեսնենք որ ինքն իւր մէջն ունի խնդրոյն կատարեալ լուծումը: Վահէվահեան մեհենին եկած տեղը «յաշտից տեղիք» կոչելով՝ առարկոյս չգեր թէ այժմու ազաւազեալ «Աշտիշատ»-ը կը մըրըներ «Յաշտիշատ» այսինքն՝ ուր յաճախ պաշտօն (յաշտ = իշտ) կը կատարուեր, և զայս կարի քաջ կապացուցանէ մի քանի տող իստորեւ ասածը. «որ և անուանեալ ըստ յաճախապաշտաման տեղեացն «յԱշտիշատ»:

* Այս անուամբ մէ հրեշտակապեատ կայ:

Այս վերջին համարի մեջ ակներեւ է որ տղետ ընդօրինակողի մը կողմանէ յ-ն նախդիր կարծուելով չարաշար զատուցուած է բառին մարմնէն եթէ ոչ խօսքին քերականական շարքը և իմաստն ալ յայտ յանդիման կը ցուցնեն որ Աօսիւատը ուղղական հօլով տէր բայի պէտք է լինի, առանց որոյ անիմաստ և անտրամարանական կը մննայ խօսքը: Աւելի բացայացութեան համար, պէտք է մի բութ ևս զնել «տեղեացն» ի վրայ և ընթեռնուլ: «որ և անուանեալ ըստ յաճախապաշտաման տեղեացն՝ Յաշտիշատ»:

Աւրեմն Աօշտիշատ»-ը յատ=شت տրմատէն Յաշտիշատ է, որով կը պարզուի, բաւին սոյցը յօրինուածն ալ՝ իմուտի պատշաճութիւնն ալ:

Վերջաբան

Այս տեղ վերջացնելով մեր այս հակիրճ տեսութիւնը պարտք կը համարենք յիշել որ մեր այս գիտողութիւններէն ոմանք թերեւս ուրիշ բանասիրաց կողմանէ ալ քննութեան առարկայ եղած է լինին ժամանակին: Եթէ ի ձեռին ունենայինք զանոնք կամ բնաւ այս աշխատութիւնը չեինք հաներ ի լցու և կամ սիրով և յօժարափոյթ կը յիշատակէինք, զանոնք անոնց տալով ի հարկէ նախագատուութիւնը:

Մենք այսպիսի խնդիրներու մեջ առաջնութեանց յետնութեան յաւակնութիւններ չունենալով, ուրախ կը լինինք մահաւանդ տեսնելով և իմանալով որ այլք կանխած են զմեզ մի և նոյն հայեացքներու մեջ: Քսնզի սովու աւելի ևս հիմ և հաստառութիւն կառնեն յայտնուած գաղափարները, այլ և այլ կողմերէ, անկախաբար, մի և նոյն արդիւնքը գուրս գալով: